

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՇ ԱՐԵՂԱՅ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ



Ծնած է 29 Յունուար 1973ին, Սուրիոյ հայաշատ Հալէպ քաղաքին մէջ: Նախնական կրթութիւնն ստացած է տեղւոյն Կիլիկեան վարժարանին մէջ: Ութամեայ կրթութենէ մը յետոյ հոգեւորական ըլլալու բոլոր ցանկութեամբ կը դիմէ Սուրբ Էջմիածին եւ 1987 Յունուար 17ին կ'ընդունուի Մայր Աթոռի Հոգեւոր Ընտարան:

1991 Սեպտեմբեր 15ին, Խայկերացի տօնին կատարուած Միտոնօրհնութեան նախօրեակին Սարկաւազ կը ձեռնադրուի՝ ձեռամբ Մայր Աթոռի դիւանապետ Բարձր. Տ. Ներսէս Արքեպս. Պողոսպալեանի: Այնուհետեւ «Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը 1911-1990» խորագիրը կրող ուսումնասիրութեամբ կը պաշտպանէ ասարտական ճառը եւ 24 Յունիս 1993ին օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ի ձեռամբ կը ստանայ Հոգեւոր Ընտարանի վկայականը:

Աստուածաբանական իր ուսումը կատարելագործելու եւ տեղւոյն գաղութին մէջ ծառայելու նախատեսուով 23 Դեկտեմբեր 1993ին կու գայ Գերմանիա, Առաջնորդ Գարեգին՝ Արքեպս. Պեքմեանի հրաւերով: Գերմաներէն լեզուի դասընթացքներուն հետեւելէ ամսիջապէս յետոյ 1994ի Ապրիլէն սկսեալ կը փոխադրուի Էդլակըն, ուր կ'անցնի համալսարանական կանոնաւոր ուսման քաղաքի Ճրիտրիխ Ալէքսանտր Համալսարանի աստուածաբանական ֆաքիւլթէի մէջ, որ մինչեւ օրս կը շարունակէ յաջողութեամբ: